ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/215

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2021թ. թիվ 26/26-1/12707-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի 02.08.2021թ. թիվ 02-268 գրության հիման վրա 10.08.2021թ. թիվ 26/26-1/12707-2021 գրությամբ նախաձեռնել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վոլտ 1999» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/215 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) 02.08.2021թ. թիվ 02-268 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/60» ծածկագրով օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման ձևով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վոլտ 1999» ՍՊԸ-ն: Սահմանված ժամկետներում սույն թվականի հուլիսի 29-ին ծանուցվել է պայմանագրի նախագիծը:

Սույն թվականի հուլիսի 31-ին «Վոլտ 1999» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, նախաձեռնել գործընթաց՝ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի բ) ենթակետի:

Կից Ձեզ ենք ներկայացնում ընթացակարգի վերաբերյալ արձանագրությունները, մասնակցի գրությունը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/215 ընթացակարգի շրջանակներում 13.08.2021թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/215 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/60» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վոլտ 1999» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Չափաբաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
2	<<Օդորակիչ շարժական >>	431250/չորս հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր հիսուն/	86250/ութսունվեց հազար երկու հարյուր հիսուն/	517500/հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 29.07.2021թ. ծանուցել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. «Վոլտ 1999» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վոլտ 1999» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/60 ծածկագրով մրցույթին (1-ին և 2-րդ չափաբաժնի մասով): 2-րդ չափաբաժնի մասով որոշել ենք մասնակցել 717500 /յոթ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/ դրամ ընդհանուր գնով, սակայն ներկայացված գնային առաջարկում սխալմամբ գրել ենք 517500 /հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/ դրամ: Ամենացածր գնի հիման վրա ճանաչվել ենք հաղթող, սակայն հասկանալի պատճառներով նման ցածր գնով չենք կարող Շարժական օդորակիչները /3 հատ/ մատակարարել: Ուստի ստիպված ենք հրաժարվել

ընթացակարգին մեր հետագա մասնակցությունից, մասնավորապես՝ պայմանագիր կնքելու առաջարկից:

Հայցում ենք Ձեր ներողամտությունը և խնդրում ենք մեր՝ գնային առաջարկում թույլ տրված սխալը համարել տեխնիկական վրիպակ»:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ 30.07.2021թ. «Վոլտ 1999» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.08.2021թ. թիվ 26/26-1/12707-2021 գրությունը, ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի 02.08.2021թ. թիվ 02-268 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝

մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/60» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վոլտ 1999» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

Չափա-բաժին-ների համա-րները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
2	<<Օդորակիչ շարժական >>	431250/չորս հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր հիսուն/	86250/ութսունվեց հազար երկու հարյուր հիսուն/	517500/հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով 29.07.2021թ. ծանուցել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Վոլտ 1999» ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վոլտ 1999» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ԱՆ «Պրոֆ Ռ.Հ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/60 ծածկագրով մրցույթին (1-ին և 2-րդ չափաբաժնի մասով): 2-րդ չափաբաժնի մասով որոշել ենք մասնակցել 717500 /յոթ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/ դրամ ընդհանուր գնով, սակայն ներկայացված գնային առաջարկում սխալմամբ գրել ենք 517500 /հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/ դրամ: Ամենացածր գնի հիման վրա ճանաչվել ենք հաղթող, սակայն հասկանալի պատճառներով նման ցածր գնով չենք կարող Շարժական օդորակիչները /3 հատ/ մատակարարել: ***Ուստի ստիպված ենք հրաժարվել*** ընթացակարգին մեր հետագա մասնակցությունից, մասնավորապես՝ ***պայմանագիր կնքելու առաջարկից:***

Հայցում ենք Ձեր ներողամտությունը և խնդրում ենք մեր՝ գնային առաջարկում թույլ տրված սխալը համարել տեխնիկական վրիպակ»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 1.2 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն

արձանագրել է, որ 30.07.2021թ. «Վոլտ 1999» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, ***<u>քանի որ Ընկերությունը գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 10.08.2021թ. թիվ 26/26-1/12707-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վոլտ 1999» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**